

Սասուն Հարությունյան

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑՈՒ ԶԱՆՔԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

**Բանալի բառեր- Սիմեոն Երևանցի, հայրապետ, եկեղեցի, Էջմիածին,
կաթողիկոս, կաթոլիկ, դավանանք, վարդապետ, օծել, Մայր Աթոռ:**

Սիմեոն Ա Երևանցու (1763-1780 թթ.) գահակալության տարիներին Հայաստանը դեռ գտնվում էր Պարսկաստանի և Թուրքիայի լծի ներքո: Նա, լինելով հայոց ամենաերևելի հայրապետներից մեկը, հստակ գիտակցում էր, որ այդ դժվարին կացության մեջ հայ ժողովրդի փրկության միակ հենքը ազգային եկեղեցին է: Որպեսզի անխաթար մնար հայ եկեղեցու միասնությունը, Ամենայն Հայոց հայրապետը փորձում էր անխաթար պահել Էջմիածնի դիրքը. «Հայոց եկեղեցու միասնությունը պաշտպանելու համար Սիմեոն Երևանցին ձգտում էր միշտ բարձր պահել Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության հեղինակությունը, ունենալ մեկ գերագահ կաթողիկոս, ուժեղացնել Էջմիածնի տնտեսական և քաղաքական նշանակությունը...»¹:

Ս. Երևանցու կարևոր ձեռքբերումներից մեկն էլ այն է, որ նա երկար պայքարից հետո կարողանում է Էջմիածնի գերագահ դիրքը հաստատել ցարական Ռուսաստանի տարածքում գտնվող հայկական թեմերի նկատմամբ: Այդ թեմերը ժամանակին գտնվում էին Մայր Աթոռի ենթակայության ներքո, սակայն Էջմիածնի կողմից նշանակված առաջնորդը թերանում էր իր առաքելության մեջ, որն առաջացնում է տեղի հայերի զայրույթը: Նրանք 1749 թ. բողոք են հղում ցարին՝ խնդրելով, որ նա փոխի Էջմիածնի կողմից նշանակված առաջնորդին, ով լիարժեք չէր կարողանում իրականացնել իր պարտականությունները: Ստեղծված խառը վիճակից շտապ փորձում է օգուտ քաղել Գանձասարի կաթողիկոսությունը՝ այդ պաշտոնում նշանակելով իր ներկայացուցչին:

Այսպիսով, Էջմիածինը 18-րդ դարի կեսին փաստացի կորցնում է իր իշխանությունը Ռուսաստանում գտնվող հայկական թեմերի նկատմամբ: 1763 թվականին ստանձնելով կաթողիկոսական գահը՝ Ս. Երևանցին ձեռնամուխ է լինում վերականգնելու Էջմիածնի նախկին վիճակը Ռուսաստանի թեմերի նկատմամբ: Բանակցելով ցարական արքունիքի հետ՝ նրան հաջողվում է նորից հաստատել Էջմիածնի կորցրած գերիշխանությունը ռուսահայոց թեմերի նկատմամբ:

¹Պ. ԵԱՍ. Գևորգյան, Սիմեոն կաթողիկոս Երևանցու ջանքերը Հայոց եկեղեցու միասնության և հայ ժողովրդի ազգապահպանման գործում, «Էջմիածին» ամսագիր, N ԺԲ, 1972, էջ 38:

Երկրում տիրող քառասյին վիճակը բացասաբար էր անրադառնում հայ եկեղեցու ամրության և միասնության վրա: Օտար զավթիչներն ավերում և թալանում էին երկիրը, նրանք փորձում էին մասնատել և պառակտել ազգային եկեղեցին. «... Հայոց մեջ բաժանում ձգել, ըստ Հռովմեական առածին բաժանում էին որպէս զի ինքեանք դիւրութեամբ տիրեն. նոքա միջամտում էին հայոց ներքին գործերին, ուր որ միայն որևէ շահ կարող էին ունենալ և ամենագլխաւորը, նիւթական շահ»¹: Այսպիսի պառակտողական քաղաքականության արդյունքում հարաբերությունները սրվում են նաև Էջմիածնի և Գանձասարի² կաթողիկոսությունների միջև:

Գանձասարի կաթողիկոսությունը մինչև 17-րդ դարի առաջին քառորդը ենթարկվում էր Էջմիածնի կաթողիկոսությանը: Սակայն 17-րդ դարի վերջին Ղարաբաղում հայտնվում է մի նոր, ինքնակոչ կաթողիկոսություն, որի աթոռանիստն էր «Երեք մանկանց» վանքը: Հարաբերություններն Էջմիածնի հետ ավելի են լարվում, երբ 1706 թ. Գանձասարի աթոռում ընտրվում է Ներսես Ե (1706-1735 թթ.) հակաթոռ կաթողիկոսը³, առանց հայոց կաթողիկոսի համաձայնության: Ներսես Ե-ն որոշ ժամանակ անց եպիսկոպոս է ձեռնադրում իր հորեղբորորդի Իսրայելին, ով նրա մահվանից հետո օծվում է կաթողիկոս: Կաթողիկոս ընտրվելու հարցում Իսրայելին օժանդակել է Շահվերդի խանը: Բայց Իսրայելին օժելու մասին տեղյակ չէր Էջմիածնի կաթողիկոսը: Գանձասարում հայ մելիքների և Ղարաբաղի խան Իբրահիմի հավանությամբ կաթողիկոս է ընտրվում Հովհաննեսը: Այս պահից պայքար է ծավալվում Գանձասարի և Գանձակի մոտ գտնվող «Երեք մանկանց» վանքերի միջև: Իսրայելն ընտրվել էր առանց Էջմիածնի կաթողիկոսի օժանդակման, նրա պաշտոնավարությունը համարվում էր ոչ օրինական: Իսրայելը ամեն կերպ ջանում էր թուլացնել Էջմիածնի դիրքերը: Փորձում էր իր իշխանությունը տարածել այն թեմերի վրա, որոնք գտնվում էին Էջմիածնի ենթակայության ներքո. «Նորա կաթողիկոսութիւնը վաւերական չէր, որովհետև ժողովրդի ցանկությամբ և Էջմիածնայ ընդհանրական հայրապետի օժանդակմամբ չէր եղած, ինչպէս այդ լինում էր ի սկզբանէ հետէ. Չնայելով դորան, Իսրայելը այնքան առաջ էր գնացել իւր

¹Գ. քահ. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ ԾԴ:

²Աղվանից աթոռը կազմավորվել է VI դարում: Այն ընդունել է Հայոց կաթողիկոսի գերագահությունը՝ ներառելով Աղվանքի և Սեծ Հայքին պատկանող Ուտիք և Արցախ նահանգներում գտնվող թեմերը: Աղվանից կաթողիկոսը կրել է «Կաթողիկոս Աղվանից, Լիւնաց և Չողայ» տիտղոսը: XIV դարում Աղվանքի կաթողիկոսական աթոռը տեղափոխվել է Գանձասար և սկսել է կոչվել Գանձասարի կաթողիկոսություն՝ շարունակելով ենթարկվել Հայ առաքելական եկեղեցուն:

³1707 թ. կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցին (1706-1714 թթ.) բանադրում է Ներսեսին և Գանձասարի կաթողիկոսի պաշտոնը կրկին հանձնում է Եսայի Հասան Ջալալյանին (1702-1728 թթ.): Իրավիճակը կրկին սրվում է, երբ Էջմիածնում կաթողիկոս է ընտրվում Աստվածատուր Ա Համադանցի (1715-1725 թթ.) կաթողիկոսը: Պատճառն այն էր, որ Եսայի Ջալալյանը խզել էր կապերը Մայր Աթոռի հետ և անգամ չէր շնորհավորել Աստվածատուր կաթողիկոսին: Հարցը կարգավորվում է 1719 թ., երբ Եսայի կաթողիկոսը զղջում է իր արած քայլերի համար և ներում է ստանում Էջմիածնի կաթողիկոսից: Եսայի Հասան Ջալալյանի մահվանից հետո՝ 1730 թ. Ներսեսը գալիս է Էջմիածին և կրկին նշանակվում է Գանձասարի կաթողիկոսի պաշտոնում՝ Աբրահամ Բ Խոշաբեցի կաթողիկոսի (1730-1734 թթ.) կողմից: Մանրամասն տես **Սիմեոն Երևանցի**, Ջամբռ, Երևան, 2003, էջ 115-120:

յանդգնութեան մէջ, բացի իւր թեմից աշխատում էր նաև Էջմիածնի թեմերից մի մասը իւրացնել և այս նպատակով նուիրակ էր ուղարկել իւր կողմից Հաշտարխան և Ղզլար քաղաքները, որոնք պատկանում էին Էջմիածնայ իրաւասութեան»¹:

Իսրայելը բազմիցս Շահվերդի խանի միջոցով փորձում էր համոզել Ս. Երևանցուն, որպէսզի Աստրախանի թեմերի նվիրակության պաշտոնը հանձնի Գանձակի հակաթոռ կաթողիկոսությանը: Բայց հայոց կաթողիկոսը մերժում էր²:

Ս. Երևանցին Գանձասարի աթոռի նմանօրինակ վիճակը շատ ծանր էր տանում: Նա շատ լավ էր հասկանում, որ սա ևս քայլ էր արտաքին ուժերի կողմից՝ նպատակաուղղված հայ եկեղեցու պառակտմանը: Վեհափառն ամեն կերպ փորձում էր լուծել այս խնդիրը՝ պահպանելով Մայր Աթոռի գերագահությունը: Նա չէր կարող թույլ տալ ոչ մի գործողություն՝ ուղղված Էջմիածնի դեմ: Փորձում էր համոզել Իսրայելին, որ վերջինս գար Էջմիածին և օրինավոր կերպով օժվեր կաթողիկոս: Վեհափառը նաև հորդորում էր վերջ տալ Էջմիածնի ջլատմանն ու պառակտմանն ուղղված քաղաքականությանը: Սակայն, ինչպէս վերը նշեցինք, Իսրայելի թիկունքում կանգնած էին արտաքին ուժերը՝ այս պարագայում Գանձակի խանը, ում ձեռնտու էր Էջմիածնի թուլացումը:

Մելիքները, տեսնելով Իսրայելի պահվածքը և այն հանգամանքը, որ նա Գանձասարի փոխարեն նստում է Գանձակում, խնդրում են Ղարաբաղի Իբրահիմ Խալիլ խանին, որ վերջինս միջնորդի Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Հովհաննես Եպիսկոպոսին օրինական կերպով օժելու Գանձասարի կաթողիկոս: Անսալով մելիքներին և կատարելով տեղի ժողովրդի ցանկությունը՝ Իբրահիմ խանը Հովհաննես վարդապետին Երևանի խանի և Ամենայն Հայոց կաթողիկոսի անուններով գրված հանձնարարական թղթերի հետ միասին ուղարկում է Էջմիածին: Սակայն հասնելով Էջմիածին՝ նրանք մերժվում են Սիմեոն Երևանցու կողմից: Ամենայն Հայոց վեհափառը չի համաձայնում Հովհաննես Եպիսկոպոսին օժել Գանձասարի կաթողիկոս. «Գանձասարի կողմից որոշ մելիքներ և ուրիշ աշխարհիկ մարդիկ եւ վարդապետներ՝ մոտ հիսուն հոգի, մի քանի տեղից կնքված թղթով եւ մի շարք գրություններով՝ ուղղված մեզ եւ Հուսեփն Ալի կոչված խանին, որ նստում էր Երևանում, այլեւ Խամսայ երկրի Փանահ խան կոչվածի գրությամբ եւ (նրա) մարդով, վերցնելով նաեւ ոմն վարդապետի՝

¹Գ. քահ. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 28:

²«... յղեալ էր ընդ թղթոյն իւրոյ՝ բանիւ աղերսական, զի կատարեսցէ զխնդիրս Շահվերտի խանին. որ գրեալ էր արեւ ինքն վասն Իսրայել ապօրինաւոր Կաթողիկոսին, զի աղերսեսցէ զսրբազան Վեհըս մեր, տալ նմա զՀաշտարխան, զի նա առաքեսցէ անդ զնուիրակ: Եւ ո՛չ եթէ ըստ այսմ կերպի, թէ քոյէ, նմա տու՛ր, այլ թէ նորին է՛ և գրեալ է դա արեւ ժողովուրդս տեղւոյն ո՛չ տալ սմա զնուիրակութիւն: Տեսանելի է աստանօր զապօրինաւորին լրբութիւն. զի զՀաշտարխան իւրն դնէր, և զժողովարարն իւր նուիրակ անվանէր, որ երթեալ անդ զբազում լրբութիւնս առնէր և հակառակէր նուիրակին մերոյ»: Տես Գ. քահ. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 284:

Հովհաննես անունով, եկան մեզ մոտ, Սուրբ Աթոռ, որպեսզի իբրև թե նույն Հովհաննես վարդապետին ձեռնադրենք Աղվանքին կաթողիկոս: Ասում են, թե Իսրայելն ինքնագլուխ եւ առանց իրենց գիտության է եղել կաթողիկոս եւ ոչ էլ գալիս է Պանծասարի աթոռը, որի համար էլ իրենք չեն ուզում նրան: ...Թե նրանք ինչքան մեզ ցավ պատճառեցին տաճիկ եւ հայ (ներկայացուցիչներով), ինչքան օրեր (շարունակ) չենք շարունակում (ասել): Միայն (ասենք), որ սկզբից մինչեւ վերջ մեր պատասխանը նրանց այս եղավ, թե Իսրայելը կաթողիկոս է օծվել միջեւ Եսային եւ նստում է Պյանջայում, մի՛ արեք այդ անկարգությունը եւ մի՛ զցեք այդ երկպառակտությունը ձեր երկրում եւ այլն»¹: Ս. Երևանցին նման կերպ փորձում է լուծել խնդիրը: Նա դեռ հույս էր փայփայում, որ կարող է համոզել Իսրայելին, որպեսզի վերջինս գար Էջմիածին և օրինական կարգով օծվեր, այդ պատճառով մերժում է Հովհաննես եպիսկոպոսին, վերջ տալու համար երկպառակտությանը: Սակայն խնդիրը ավելի է բարդանում: Երբ վրդովված Հովհաննես եպիսկոպոսն առանց օծվելու վերադառնում է Պանծասար, ընդդդիմանալով Հայոց հայրապետին՝ տեղի եպիսկոպոսների կողմից օծվում է Պանծասարի կաթողիկոս: Փաստորեն, Ս. Երևանցու ջանքերը հարցին խաղաղ լուծում տալու՝ ի դերև եղան: Տեղի է ունենում լրիվ հակառակը: Արցախում երկու կաթողիկոսներ են հաստատվում. Իսրայելը՝ Պանծակում, իսկ մյուսը՝ Հովհաննեսը, Պանծասարում: Այս երկու կաթողիկոսներն էլ առանց Էջմիածնի թույլտվության էին իրենց հռչակել կաթողիկոս: Բայց, ի տարբերություն Իսրայելի, Հովհաննեսն ընտրվել էր տեղի հոգևորականների կողմից՝ հակառակ Էջմիածնի կամքի, և տեղի ժողովուրդը համաձայն էր, որ նա լինի կաթողիկոս: Իսկ Իսրայելը դեռ բավական երիտասարդ էր և Էջմիածնի կաթողիկոսի օծմանը չէր արժանացել. նրան դեմ էր նաև ժողովուրդը:

Էջմիածնի կաթողիկոսի հավանությանն արժանանալու համար թեկնածուներից յուրաքանչյուրի կողմնակիցները վեհափառին հանգիստ չէին տալիս: Նրանց պաշտպանները սկսում են բանակցել Էջմիածնի հետ՝ ամեն մեկը առաջարկելով իր թեկնածուին: Երկար նամակագրություն է սկսվում խաների և կաթողիկոսի միջև: Խաները փորձում են սպառնալ կաթողիկոսին, սակայն Ս. Երևանցին տեղի չի տալիս և նույն ոճով պատասխանում է նրանց նամակներին²: Հարցին լուծում տալու համար Ամենայն Հայոց հայրապետը առաջարկում է երկու կաթողիկոսներին գալ Մայր Աթոռ, որտեղ երկուսից մեկը կընտրվեր Պանծասարի կաթողիկոս: Հովհաննեսը արձագանքում է Ս. Երևանցու առաջարկին, անհապաղ

¹ Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Երևան, 2003, էջ 122:

² Գ. քահ. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 313-314:

գալիս է Մայր Աթոռ՝ այդ կերպ իր հնագանդությունը հայտնելով Էջմիածնի կաթողիկոսին: Իսրայելը չի գալիս Էջմիածին: Բայց Ս. Երևանցին դեռ չէր կորցրել հույսը, որ կարող է համոզել Իսրայելին՝ գալու Էջմիածին: Երբ Հովհաննեսն արդեն Էջմիածնում էր, հայրապետը փորձում է նրան համոզել, որ եթե Իսրայելը դառնա կաթողիկոս, ապա նա չընթուստանա վերջինիս դեմ: Կաթողիկոսն առաջարկում է Հովհաննեսին ցանկության դեպքում ծառայության անցնել իր մոտ: Իսրայելին համոզելու համար Ս. Երևանցին մի թուղթ է գրում վրաց Հերակլ արքային, որ վերջինս հրամայի Քանձակի խանին՝ Իսրայելին ստիպողաբար Էջմիածին ուղարկելու: Այս փորձը նույնպես չի արդարանում: Իսրայելի նման պահվածքը ոչ միայն շարժում էր Ս. Երևանցու գայրույթը, այլև իր դեմ էր տրամադրում իր իսկ կողմնակիցներին: Իսրայելն իր համառությամբ ստիպում է բոլորին երես թեքել իրենից: Ս. Երևանցին հարցին շուտափույթ լուծում տալու համար որոշում է Հովհաննեսին օժել Քանձասարի կաթողիկոս. «1765 թուի դեկտեմբերի 25-ին, Դաւիթ մարգարէի և Յակովբ առաքելոյ տօնի օրը, Յովհաննիսին ս. Էջմիածնի տաճարում պատարագել է տալիս Հայրապետական պատուով. և որովհետև Յովհաննիսի կաթուղիկոսական օծումը անկատար էր՝ Սիմէոն կաթուղիկոսը եպիսկոպոսների ժողով կազմելով և խորհրդակցելով նոցա հետ՝ այսպէս լրացրեց այդ թերութիւնը. Յովհաննիսի պատարագելու ժամանակ, նախ քան սա սեղան կը բարձրանար, ինքը շորջառ առնելով կարդաց նորա վերայ Աւետարանից այն գլուխը, ուր ասուած է թէ՛ Մի մարդ երկու որդի ունէր, որոնց վերջինը կատարեց հօր կամքը...»¹:

Ընդունված կարգով և մեծ շուքով Հովհաննեսը ընտրվում է Քանձասարի կաթողիկոս²: Այսքանով կարծես լուծվում է վիճելի խնդիրը: Սակայն Իսրայելն ամեն ինչ անում էր, որ ինքն ընտրվեր կաթողիկոսի պաշտոնում: Նա կարողանում է համոզել խանին, որ սա խնդրի վրաց Հերակլ արքային՝ բարեխոսելու Էջմիածնի կաթողիկոսի մոտ: Իսրայելը միաժամանակ կեղծ նամակ է գրում Հերակլին, որտեղ նշում է, թե իբր տեղի ժողովուրդը հավանություն է տալիս ոչ թե Հովհաննեսին, այլ՝ իրեն: Երբ վրաց արքան այս ամենի մասին հաղորդում է Ս. Երևանցուն՝ վերջինս հանգամանալից պատասխանում է Հերակլին՝ ծանոթացնելով խնդրի իսկությանը³:

Կաթողիկոսը խնդրում է Հերակլ II-ին, որ նա չխառնվի սույն խնդրին: Նույն բովանդակությամբ մի նամակ էլ վեհափառը գրում է վրաց Անտոն կաթողիկոսին:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ ԾԺԵ:

² **Գ. քահ. Աղանեսն**, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 365-366:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 358-360:

Այդ ամենից հետո Ս. Երևանցին բանադրում է Իսրայելին¹: Սակայն Իսրայելը, շարունակելով իր համառությունը, կրկին փորձում է համոզել Հերակլին, որ միջնորդի իրեն կաթողիկոս օծելու: Հերակլ արքան, հարգելով Ամենայն Հայոց կաթողիկոսի որոշումը, պաշտպանում է Հովհաննեսի թեկնածությունը:

Իսրայելը բանադրանքի արժանանալուց հետո հեռանում է Քանձակ և այնտեղ մնում տասնմեկ տարի: 1777 թ. Քանձակի խանի եղբայր Ջավադի միջնորդությամբ Ս. Երևանցին էջմիածնում ընդունում է Իսրայելին: Ջղջալով արածի համար՝ նա խոստովանում է իր գործած սխալները և կաթողիկոսից ներում ստանում: Վեհափառն ազատում է նրան բանադրանքից և վերադարձնում եպիսկոպոսի կոչումը: Իսրայելն ամեն ինչ անում է Հովհաննեսի ձեռքից կաթողիկոսի պաշտոնը վերցնելու համար: Նա Ջավադ խանի միջոցով փորձում է համոզել Ս. Երևանցուն, որ նա գահընկեց անի Հովհաննեսին: Կաթողիկոսը չի ընդունում Ջավադի առաջարկը, և որպեսզի այս հարցը չշարունակեր խաթարել հայ եկեղեցու անդորրը, որոշում է, որ Հովհաննեսը որպես կաթողիկոս գործունեություն ծավալի Քանձասարում, իսկ Իսրայելը՝ Քանձակում. «... բերեց նոցա աստեան երկու կողմերի կուսակրօն հոգևորականների և իշխանների հետ, երկար խօսեցրեց նոցա, սաստեց հոգևորականներին իրանց խռովասիրութեան համար, երդուեցրեց նոցա Տաճարում Սրբութեանց առաջ խաղաղութեան հետևող լինել, հաշտեցրեց նմանապես երկու կաթողիկոսներին ևս...»²:

Այսպիսով, երկարատև ու համառ պայքարից հետո Սիմեոն Երևանցուն հաջողվում է վերկանգնել Ամենայն հայոց կաթողիկոսության գերագահությունն Աղվանից աթոռի նկատմամբ:

Սիմեոն Ա Երևանցին հայտնի է կաթոլիկ եկեղեցու դեմ ծավալած իր անզիջում պայքարով: Նա ամեն ինչ անում էր, որ կայունացներ հայ եկեղեցու հիմքերը: Լինելով հայ եկեղեցու առաջնորդը՝ չէր կարող թույլ տալ, որ պապական Արևմուտքը իր կրոնական դավանանքը տարածեր Հայաստանում՝ ամեն կերպ փորձելով նսեմացնել ազգային եկեղեցու անունը և խորհուրդը: Ս. Երևանցին խիստ բացասաբար էր վերաբերվում կաթոլիկ եկեղեցու դավանաբանությանը: Նա իր պարտքն էր համարում շրջել Հայաստանի տարածքներում և ժողովրդին քարոզել կաթոլիկության վնասների մասին: Բացի այդ, գրում է մի աշխատություն՝ «Պարտավճար» վերնագրով, որտեղ մանրամասնորեն շարադրում է և

¹«Բանադրանաց թուղթ ևս գրեաց սրբազան Վեհըն առ չիք Իսայելի ապօրինաւորն և Կաթողիկէաքական Աղուանից ըստ Աստուածային արդար իրաւանցն վասն ամենից չարեացն՝ զորս գործեաց նա մինչև ցայժմ, առ սուրբ Աթոռս և առ Աթոռակալս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և ընդդէմ կանոնաց հարցն սրբոց և Աստուածային օրինացն, զորոց ասացեալ է և մինչև ցայս վայր...»: Տե՛ս նույն տեղում, էջ 420:

² Գ. քահ. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 268:

գաղափարապես ապացուցում հայ եկեղեցու անաղարտ դավանանքը՝ այն հակադրելով կաթոլիկ դավանաբանությանը:

Հայաստանում այդ շրջանի կաթոլիկության ամենահայտնի կենտրոններից մեկը Ախալցխան էր. «Կաթոլիկութիւնը առավել քան որևիցե բան էր դրել Ախալցխայում, տակաւին տասնևութերեդ դարուց սկսած. Նոցա մէջ գլխաւորներն էին՝ Ալոխլի, Հերոնիմոս, Վիչէնցիոս, Ֆէդէրիկօ և Ֆրաֆոռտօնատօ պատրերները...»¹:

Ախալցխայում այդ ժամանակ կաթոլիկ գաղափարներ ունենալու համար մեղադրվում էր Կարինի Կարմիր վանքի եպիսկոպոս Գևորգ Եվդոկացին²: Վերջինս եպիսկոպոսական աստիճան էր ստացել 1760 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցուց: 1764 թվականին նրան ուղարկում են Ախալցխա, պայքար ծավալելու կաթոլիկական գաղափարների դեմ: Սակայն Գևորգ եպիսկոպոսն աստիճանաբար խորանում է կաթոլիկ դավանության մեջ և Հայ Առաքելական եկեղեցու հավատամքը հաստատուն պահելու փոխարեն սկսում է կաթոլիկություն քարոզել ու վատաբանել հայոց նվիրապետությունը: Տեսնելով այս ամենը՝ տեղի բնակչությունը բողոքում է կաթողիկոսին, թե Գևորգ եպիսկոպոսն այն անձը չէ, ում վստահել է նա: Տեղի համայնքը գրություն է ուղարկում Ամենայն Հայոց կաթողիկոսին, որպեսզի վերջինս շուտափույթ լուծում տա խնդրին և փոխի հավատուրաց եպիսկոպոսին: Քանի որ Ախալցխան գտնվում էր Օսմանյան իշխանության տարածքում, Ս. Երևանցին փորձում է թուրքական իշխանություններից հրովարտակ ստանալ, որով Օսմանյան կառավարությունը թույլ տար իր տարածքում պայքար ծավալել արևմուտքից ներթափանցած միսիոներների դեմ: Կաթողիկոսը Կոստանդնուպոլիս է ուղարկում մահտեսի Հունանին, որպեսզի նա Կ.Պոլսում ապրող երևելի հայերի օժանդակությամբ կարողանար Բարձր Դռնից հաստատման հրովարտակ (ֆերման) ձեռք բերել: Շատ կարճ ժամանակահատվածում Ս. Երևանցուն հաջողվում է Կ.Պոլսից հրովարտակը ստանալ: Հրովարտակը բաղկացած էր չորս օրինակից: Եթե հետապնդումների ժամանակ կաթոլիկները մի տարածքից մյուսը տեղափոխվեին, այդ օրինակներից միաժամանակ կուղարկվեր տվյալ տարածքի կառավարչին՝ նրանց ձերբակալելու համար: Ամենայն Հայոց կաթողիկոսը չի շտապում հրապարակել հաստատման հրովարտակները: Այդ ընթացքում պատերազմ է սկսվում Թուրքիայի և Վրաստանի միջև: Վրացիներին հաջողվում է կազմակերպված ուժերով հակահարված տալ թուրքերին և պարտության մատնել նրանց: Տարածաշրջանում Օսմանյան Թուրքիայի ուժերը թուլացել էին: Հեռատես կաթողիկոսը լավ էր հասկանում, որ եթե այդ ժամանակ հրապարակվեր

¹Տե՛ս նույն տեղում, էջ ԺԽԹ:

²Տե՛ս նույն տեղում, էջ 16-17:

թուրքական Բարձր Դռնից ստացված հրովարտակը, ապա շատ հնարավոր է, որ այն չծառայեր իր բուն նպատակին: Երբ ավարտվում է պատերազմը Թուրքիայի և Կրաստանի միջև, Ս. Երևանցին փորձում է հրովարտակն ուղարկել Ախալցխա: Այս ընթացքում կաթողիկոսը շատ զգույշ է վարվում. նա հրովարտակը Կարսով չի ուղարկում, որը դեպի Ախալցխա ամենակարճ ճանապարհն էր, այլ հրամայում է այն տանել Կարին, հետո միայն անցկացնել հասցեավայր: Բանն այն էր, որ Ս. Երևանցին համոզված էր, եթե նախապես հրովարտակն ուղարկվեր Կարս, հայ կաթոլիկները անմիջապես կհասկանային, որ ուղարկողը կաթողիկոսն է: Որպեսզի կաթողիկոսի կողմից ուղարկված պատգամավորությունը ընդհանրապես կասկած չհարուցեր, Ս. Երևանցու հրամանով նա գործում էր ծպտյալ: Բանագնացները ոչ թե հոգևորականի հագուստով էին ճանապարհ ընկել, այլ՝ աշխարհականի: Նրանց հանձնարարված էր նաև, որ հնարավորինս շուտ գտնեն Իբրահիմ հրամանատարի տունն ու նրան հանձնեն հրովարտակի օրինակը և խնդրեն վերջինիս՝ շուտափույթ ձերբակալել կաթոլիկ դավանության մեջ մեղադրվող Գևորգին, Պողոսին և Հունանին: Բացի հրովարտակից, կաթողիկոսն իր պատգամավորության հետ հանձնարարական թղթեր է ուղարկում Կարինում բնակվող երևելի հայերին, որպեսզի նրանք ևս մտահոգվեն ստեղծված խնդրով¹:

Որպեսզի եկեղեցին խուսափեր կաթոլիկների հետ ավելորդ բախումներից, հանձնարարականները ստանալուց հետո տեղի հայերը հայրապետին պատասխանում են, որ ցանկալի կլինի կաթողիկոսը Կ. Պոլսի պատրիարքի միջնորդությամբ թուրքական կառավարությունից ընդհանուր հրովարտակ և լիազորված անձ խնդրի, ով և կկատարի հրովարտակի պահանջները: Այսպիսով, 1767 թվականին կաթողիկոսը կարողանում է Իբրահիմ հրամանատարի միջոցով Բարձր Դռնից ընդհանուր հաստատման հրովարտակ ստանալ:

Կաթողիկոսը ստացած հրովարտակն ուղարկում է Ախալցխայի Նոման փաշային: Վերջինս սկսում է ձերբակալել տեղի կաթոլիկներին. «Իսկ փաշան, տեսնելով իր թագավորի հրամանը, ի կատար է ածում հրամանը, ուստի յոթ ֆռանկ հայրերի, որոնք այնտեղ որջ էին ստեղծել, աքսորում է իրենց երկրից, իսկ եկեղեցին հանձնում է հայերին, հավատքի սխալմունքի մեջ ընկածներին բազմապիսի տանջանքներով ու խոշտանգումներով տանջում, իսկ վերոհիշյալ չորս հոգուն, որ հոգևոր կարգ չունեցող էին, կապանքների մեջ, իր մարդու գլխավորությամբ ուղարկում է Սուրբ Աթոռ»²:

¹ Գ. քահ. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 351-352:

² Սիմեոն Երևանցի, Ջանքո, Երևան, 2003, էջ 57:

Ձերբակալված պարագլուխները էջմիածնում մնում են մոտ երեք տարի: Տեղի բանտում նրանք ենթարկվում են դաժանագույն տանջանքների: Երկար ժամանակ զրկանքներ կրելուց հետո համաձայնվում են հավատարմագիր գրել, որ այդուհետ չեն հանդգնի ուրանալ սեփական եկեղեցու հավատքը: Որոշ ժամանակ անց Ախալցխայի բնակիչները խնդրում են Կարսի զորահրամանատար Մուստաֆա փաշային, որ վերջինս միջնորդի կաթողիկոսին՝ բանտարկյալներին ազատ արձակելու և ուղարկելու Ախալցխա: Ս. Երևանցին, ընդառաջելով Մուստաֆա փաշայի խնդրանքին՝ Կարսի իշխանների և դատավորների իրազեկությամբ ստիպում է ձերբակալվածներին թուրքերեն լեզվով նույնպես հավատարմագիր գրել, որ ոչ մի դեպքում չեն ապստամբի սեփական եկեղեցու դեմ: Այս բոլորը կատարելուց հետո կաթողիկոսը միջնորդում է Կ.Պոլսի իշխանություններին արձակման հրաման տալ և 1771 թվականին, ստանալով այն, հայրապետը բանտարկյալներին բաց է թողնում և ուղարկում Ախալցխա:

Ախալցխայի տարածքից բացի, կաթոլիկները իրենց արմատներն էին տարածել Բայազետում: Որպեսզի այստեղ նույնպես կարողանա պայքարել կաթոլիկ միսիոներների դեմ, վեհափառը սուլթանից ստացած հրովարտակից ուղարկում է Բայազետի կառավարիչ Ապտի փաշային և այլ իշխանների: Ս. Երևանցին Ապտի փաշային ներկայացնում է հարցի էությունը և խնդրում, որ նա հրաման արձակի խռովարարներին ձերբակալելու և էջմիածին ուղարկելու: Փաշան ի կատար է ածում Ամենայն Հայոց կաթողիկոսի խնդրանքը և ձերբակալում է վեց քահանաների ու մեկ տիրացուի, ովքեր մեղադրվում էին կաթոլիկություն քարոզելու մեջ: Այս վեցն էլ՝ Բրնձիկը, Մաթոն, Տեր Պողոսը, Տեր Գրիգորը, Տեր Խաչատուրը, Տեր Հարությունը և Տեր Ղազարը համարվում էին կաթոլիկ դավանանքի գլխավոր քարոզիչներ: Կաթողիկոսի հրամանով նրանց ենթարկում են տանջանքների այնքան ժամանակ, մինչև համաձայնում են հայերեն լեզվով հավատարմագիր գրել, որ այլևս չեն հարի կաթոլիկությանը: Նույնը արվում է նաև Բայազետի թուրքական դատարանում: Նրանք խոստանում են, որ երբեք չեն քարոզի կաթոլիկություն:

Ս. Երևանցին միաժամանակ անկոտրում պայքար է մղում հայ բարձրաստիճան հոգևորականների դեմ, ովքեր հայ հոգևորականի սքեմի ներքո կաթոլիկ եկեղեցու դավանանք էին քարոզում՝ աղավաղելով և փնովելով հայ եկեղեցու դավանաբանությունը և բարի համբավը: Նրանցից մեկը Գլակա վանքի առաջնորդ Հունան եպիսկոպոսն էր¹: Հունան Ամդեցին Հակոբ Շամախեցի կաթողիկոսի մահվանից հետո համարվում էր կաթողիկոսական գահի թեկնածուներից մեկը: Սակայն կարճ

¹ Գ. քահ. Աղանեան, Դիան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 226:

Ժամանակ անց նա սկսում է կաթոլիկություն քարոզել իր հոգևոր տարածքում. «նա արատաւորել էր մեր ուղղափառ սուրբ հաւատը, յայտնի «աղթարմա-յութին» էր անում և այդ աղանդին հետևողներին չէր արգելում, այնպէս որ իւր թեմի ժողովրդեան մեծ մասը գրեթէ դաւանութիւնը փոխեցին, նոցանից շատերին ինքը քահանայ ձեռնադրեց»¹: Հունանը այնքան էր խորացել կաթոլիկության մեջ, որ ամեն ինչ անում էր Մայր Աթոռին հակադրվելու համար: Նա եկեղեցու ամբողջ հասույթը կարող էր օգտագործել իր սեփական կարիքների համար: Եկեղեցուց ստացված գումարի մի մասը տրամադրում էր տեղի իշխող ուժերին, որպեսզի հարկ եղած դեպքում իրեն պաշտպանեն: Տեսնելով Հունանի նման պահվածքը Հայ եկեղեցու հանդէպ՝ Ս. Երևանցին զրկում է նրան եպիսկոպոսական կարգից և բանադրում է: Հունանը միջնորդ գտնելով՝ գալիս է Էջմիածին և զղջում: Վեհափառը ներում է վերջինիս և արծակելով բանադրանքից՝ վերադարձնում է նախկին պաշտոնին:

Նման դավաճան հոգևորականներ կային նաև Հայաստանի այլ վայրերում: Հայրապետը քրտնաջան պայքարում էր և շատ հավատուրացների է դարձի բերում առ սեփական հավատը, որի առաջին քաջ զինվորն էր հենց ինքը:

Պատմաբան Լեոն, անդրադառնալով կաթոլիկության դեմ Սիմեոն Երևանցու ծավալած պայքարին, գրում է. «Այս հավատաքննական գործունեությունը Սիմեոնի կաթողիկոսության ամենամոռայլ կողմն է կազմում»²:

Այսպիսով, կաթոլիկության դեմ մղած պայքարում Ս. Երևանցին անզիջում է եղել և սկզբունքային, որն էլ, միգուցե, հիմք է հանդիսացել մեծ պատմաբանի նման որակավորմանը: Սակայն պետականությունից զուրկ մի երկրում, որտեղ բոլոր գործառույթները՝ քաղաքական, կրոնական, տնտեսական, եկեղեցու պատասխանատվության ներքո էին, հասկանալի է դառնում Ս. Երևանցու դրսևորած համառությունը կաթոլիկության դեմ մղվող պայքարում՝ ցանկացած միջոցով փակելու դավանաբանական այլակարծության ճանապարհը:

Сасун Арутюнян, Усилия Симеона Ереванци в деле объединения армянской церкви – В середине 18-ого века Святой Престол Эчмиадзина теряет свой контроль над армянскими епархиями, находящимся на территории царской России, уступая свое место патриаршеству Гандзасара. В 1763 г. , сидя на престол патриарха, Симеон Ереванци предпринимает меры для восстановления влияния и роли Святого Престола по отношению к русским армянам. После длительной борьбы он сумел подтвердить влияние Святого Престола над

¹Տե՛ս նույն տեղում, էջ ՃԽԵ:

²Լեոն, Հայոց պատմություն, Երկ. ժող., հատոր 3, գիրք 2, Երևան 1973, էջ 280:

патриаршеством Гандзасара. Симеон Ереванци проводил неуступчивую борьбу с силами расшатывающими основы национальной церкви. Во второй половине 18-ого века перед армянской церковью вновь стояла задача противостояния католицизму. Симеон Ереванци не мог позволить папскому Западу распространять в Армении свои религиозные догмы. Поэтому он приложил все усилия для борьбы с католическими догмами и с их проявлениями.

Sasun Harutyunyan, The efforts spent by Simeon A Yerevantsi to unite the Armenian Church - In the middle of the XVIII century St. Etchmiadzin lost its control over the Armenian diocese on the territory of Tzarist Russia. In the result Gandzasar Catholicosate became known. In 1763 Simeon A Yerevantsi became the Catholicos and undertook the activity of restoring the role of Etchmiadzin over the Armenian dioceses in Russia. After a serious struggle and efforts he was able to restore the prevailing position of the Mother See over the Gandzasar Catholicosate. Simeon Yerevantsi also organized a fierce struggle against the religious trends that were trying to deteriorate the foundations of the National Church. In the middle of the XVIII c.as well as before that period the primary issue for the Armenian Church was to fight against catholicism. As the leader of the Armenian Church Simeon Yerevantsi could not allow the papal West to expand its faith in Armenia, so he put his efforts to resist against Catholic faith and the similar phenomena.

Սասուն Հարությունյան – պատմ. գիտութ. թեկնածու, Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի ասիստենտ: